

2. Զ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆՑԻ ԼԵԶՎԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՅՔՆԵՐԸ

Սա. Մալխասյանցը ծնվել է 1857 թ. Ախալցխայում, արհեստավորի ընտանիքում։ Սկզբնական կրթությունն ստացել է ծխական դպրոցում և ապա սովորել է գավառական դպրոցում։ 1874 թ. նա ընդունվում է Էջմիածնի նորարաց Գևորգյան ճեմարանը, դառնալով նրա անդրանիկ սաներից մեկը։ Հայագիտական բարձրագույն կրթությունն ստանալու նպատակով մի քանի տարի հետո նա գնում է Պետերբուրգ։ 1889 թ. Մալխասյանցը ավարտում է Պետերբուրգի համալսարանի հայ-վրացական բաժանմունքը և ստանում թեկնածուի աստիճան։ Վերադառնալով հայրենիք, երկար տարիներ նա պրաղվում է մանկավարժական աշխատանքով։

Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակից հետո, այն հեռանկարներ են բացվում Մալխասյանցի ստեղծագործական կյանքի համար, և նա հիմնականում զբաղվում է գիտական գործունեությամբ։

Ղեկավարվելով խորահմուտ գիտելիքներով հայերենի վերաբերյալ՝ Մալխասյանցի գրիչը շուրջ 70 տարի շարունակ ամօթարժեք վաստակներ է բերել հատկապես հայագիտության երեք կարևորագույն բնագավառներում՝ հայ բանասիրության, բառարանագրության և քերականության։

Մալխասյանցը նախապես հանդես եկավ իբրև թարգմանիչ և ապա՝ բանաստեղծ։ Նա թարգմանել է և՛ գեղարվեստական, և՛ գիտական աշխատանքներ մասնավորապես 70—80-ական թվականներին։

Մալխասյանցի բանասիրական հետազոտությունների ասպարեզը հիմնականում հղել է հայ մատենագրության պատմությունը։

Նրա առաջին լուրջ աշխատությունը հրապարակ քե հկել 1885 թվականին: Այդ՝ նրա մշակմամբ ու ծանոթագրություններով լույս տեսած «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերականն» էր: Հետագա տարիներին հաջորդաբար հրապարակ են գալիս նրա մյուս աշխատանքները: Սրանց բնորոշ գիծն այն էր, որ մշակվում էին հին մատենագրական երկերը, լրացվում ուշագրավ ծանոթագրություններով և պարզաբանվում կից ուսումնասիրություններով: Այսպես են լույս տեսել՝ «Պատմութիւն Ղևոնդայ Մեծի վարդապետի Հայոց» (1887) «Ղազարու Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան» (1904 թ., Գ. Տեր-Մկրտչանի աշխատակցությամբ), Սեբեոս եպիսկոպոսի «Պատմութիւնը» (1939), Ամիր Տովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» (1940) և այլ գործեր:

Մալխասյանցի բանասիրական-մատենագրական աշխատանքը բազմազան էր իր բնույթով: Հատկապես ուշագրավ է նրա այն գործունեությունը, որ նա ծավալել է հայ պատմիչների երկերը աշխարհարարի թարգմանելու ուղղությամբ: Դա մեր տաղանդավոր պատմագիրների հազարավոր հայ ընթերցողներին մերձեցնելու հանրօգուտ ու երախտավոր գործ էր: Այդ աշխատանքի շնորհիվ աշխարհաբար լույս տեսան Փավստոսի և Խորենացու պատմությունները: Բացի այդ՝ ողու հասարակությանը իր թարգմանությամբ Մալխասյանցը ներկայացրեց Սեբեոսի պատմությունը:

Բանասիրական մեծ արժեք ունեն նրա «Ուսումնասիրություն Փավստոս Բյուզանդացու», «Սեբեոսի պատմությունը և Մովսես Խորենացի», հատկապես՝ «Խորենացու առեղծվածի շուրջը» աշխատությունները:

«Խորենացու առեղծվածի շուրջը» աշխատությամբ Մալխասյանցը անգնահատելի ծառայություն մատուցեց հայ կուլտուրայի պատմությանը: Հայտնի է, որ երկար ժամանակ հայ և եվրոպական մի շարք գիտնականներ կասկածի տակ էին առել Խորենացու՝ հինգերորդ դարի պատմիչ լինելը: Այդ հարցը տեականորեն արծարծվում էր հայ բանասիրության մեջ: Մալխասյանցի աշխատությունը մեծ հարված հասցրեց Խորենացուն ուշ դարերի հեղինակ համարելու կոնցեպցիային, լույս սփռեց ոչ միայն Խորենացու առեղծվածի վրա, այլև հին հայ մշակույթի, հայ բանասիրության կարևորագույն մի շարք դեմքերի ու դեպքերի գնահատման վրա: Մալխասյանցն անհերքելիորեն հաստատեց Խորենացու՝ հինգերորդ դարի վերջերի պատմիչ լինելը: Այդ աշխատությունը հայ բանավիճային գրականության լավագույն երկերից է:

Ստ. Մալխասյանցը հայ լեզվաբանական մտքի պայծառ գա-
զաթններից մեկն է:

Նրա քերականագիտական հայացքները խմորվեցին պատմա-
կան մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ լեզվաբանական հետա-
զոտությունները հիմնականում ընդունել էին նոր ուղղություն: Այդ
ուղղությունը պատմա-համեմատական լեզվաբանության նշած գիծն
էր, համեմատական քերականության գիծը: Եվ Ստ. Մալխասյանցը
դարձավ այդ ուղղության եռանդուն պրոպագանդիստներից, նրա
շերմ պաշտպաններից մեկը մեզ մոտ՝ հայերիս մեջ:

Իր քերականագիտական պրակտիկայում Մալխասյանցը միշտ
ղեկավարվել է լեզվի զարգացման օրինաչափությունների, նրա հե-
ռանկարների որոշակի, առողջ ըմբռնմամբ: Լեզուն համարելով ազգը
բնորոշող տարրերից ամենակարևորը, նա մայրենի լեզուն դիտում է
իրևե ռազգային գոյության պատվանդան¹, իրևե կենսական ան-
հրաժեշտություն, առանց որի տվյալ ազգը կորցնում է իր որակը և
ասիմիլյացիայի ենթարկվում:

Իմպերիալիստական գիշատիչների մեքենայությունների հետե-
վանքով հայ ժողովրդի դեմ ստեղծված օրհասի ու որոգայթներով լի
ճգնաժամի պահին հատկապես Մալխասյանցը շատ լավ հասկա-
ցավ, որ մայրենի լեզուն ազգի ինքնությունության կարևորագույն
գործոն է, որ ազգի ասիմիլյացիան միանգամայն իրական է դառ-
նում լեզվի ասիմիլյացիայի առկայության դեպքում: Նա վճռակա-
նորեն պայքարում էր հայոց լեզուն օտար անհարկի խճողումներից
անաղարտ պահելու համար: Բնավ չանտեսելով անհրաժեշտ փոխա-
ռությունների կարևորությունը լեզվի համար, Մալխասյանցը հայ-
տարարում էր, թե այն ժողովուրդը, որը ցանկանում է պահպանել իր
ինքնությունությունը, պետք է սիրի, փայփայի, պաշտպանի իր լե-
զուն, հոգ տանի նրա մշակման, հարստացման համար, պայքարի
օտարամուլների դեմ, ազգային լեզուն օտար անհարկի ներմուծու-
թյուններով խճողելու դեմ: Զայրույթով հանդես գալով այն մարդ-
կանց դեմ, ովքեր սկզբունքային ու հետևողական պայքար չեն
ստանում մայրենի լեզվի անաղարտության համար, Մալխասյանցը
ասում է, որ այդ մարդիկ ճավելի դյուրությամբ վստահանում են

¹ «Գործ», 1917, 9.

սրբագործել տգեղութիւնը, անկանոնութիւնը, կազմալուծութիւնը, ստար փետուրներով պշտանքը, քան շանք անել ուղղելու¹։

Այս տեսակետից Մալխասյանցին շատ են հետաքրքրել լեզվի պատմական զարգացման, նրա էվոլյուցիայի, լեզվի ու հասարակութեան (ժողովրդի) կապի, լեզվի պրոգրեսի, ազգային լեզուների փոխհարաբերութեան ու ինքնուրույնութեան հարցերը։ Լեզվի պատմական զարգացումը նա գիտում էր որպէս կենդանի պրոցես։ Լեզվի իրական կյանքը նրա կենդանի գործունեութիւնն է, խոսողութիւնը։ Խոսքը դարերի ընթացքում հղկվում, մշակվում, հարստանում է ժողովրդի բերանում։ «Զարգացում ասելով,— գրում է Մալխասյանցը,— լեզվի մեջ պետք է հասկանանք նորա սղվիլը, կրճատվիլը, կոկվիլը բառերի և ձևերի կողմից, նույնպէս և հին քերականական ձևերի կորչիլը և փոխարինվիլը նորերով։ Ինչպէս որ շուրջ յուր հունով անցնելով շարունակ զարկվում է հունին և ափերին, տանում յուր հետ թեթև նյութերը, հալում է կակուղները և հղկում է կարծր բարերը՝ նույնպէս և գործածութիւնը մաշում է լեզուն, դուրս է ձգում շատ բառեր ու ձևեր, որոնք ժամանակին համապատասխան չեն, հարթում, սղում է բառեր և քերականական ձևեր»²։

Լեզվի զարգացման վերաբերյալ նման հայացքը, որ Մալխասյանցը պաշտպանել է իր մի դասախոսութեան մեջ՝ կարդացված 1910 թ. Թիֆլիսում³ և Երաբարի համաձայնութիւնը» գրքի ներածութիւնում, վկայում է այն մասին, որ նա միանգամայն ճիշտ է հասկացել լեզվի պատմական էվոլյուցիան, լեզվի որակը բնորոշող փոփոխութիւնների բնույթը։

Անվանի լեզվաբանը որոշակիորեն պատկերացնում էր այն ընդհանուր օրինաչափութիւնները, որ ընկած են լեզուների զարգացման հիմքում։ Նա իր լեզվամշակման պրակտիկայում ղեկավարվում էր այն գիտակցութեամբ, որ լեզուն զարգանում է օբյեկտիվ օրենքներով, որ նրա օրինաչափութիւններն առանձին անհատների կամքին ենթարկելու փորձերը ապարդյուն են։

Մի ժամանակ արեւմտահայ և արեւելահայ մամուլում քննարկվում էր այն հարցը, թե հնարավոր չէ, արդյոք, երկու գրական հայերենները միացնել, կամ թերևս մերձեցնել։ Այս կապակցութեամբ ելույթներ տնեցան նաև անվանի հայագետներ Մ. Աբեղյանը և Ստ. Մալխասյանցը։ Աբեղյանը շատ ավելի հակված էր այն մտքին, որ

¹ «Մի քանի խոսք մեր երկու գրական լեզուների մերձեցման մասին», «Արարատ», 1898, № 3—4։

² «Երաբարի համաձայնութիւնը», Թիֆլիս, 1892, էջ 8—9։

³ «Մշակ», 1910, № 244։

ամենից ավելի արևմտահայերենը զիջումներ անի քերականական ձևերով, քան արևելահայերենը: Այս բանավեճը որևէ լուրջ արդյունք չտվեց, սակայն քննարկման ժամանակ արծարծվեցին գիտական հասարակայնությանը հետաքրքրող որոշ խնդիրներ:

Մալխասյանցը անդրադառնալով որոշ հայագետների այն դիտողությանը, համաձայն որի նալքանդյանը լավ արած կլինեիր, եթե «ում» սահմանական ձևի փոխարեն նախընտրեր «կը»-ն, գտնում է, որ լեզվի օրենքները կախում չունեն առանձին անհատների քմահաճույքից, որ նոսր վարգացումը ժողովրդի գործն է, հետևապես արհեստականորեն չի կարելի մկրատելով լեզուներ մերձեցնել կամ միացնել: Լեզուները զարգանում են իրենց հատուկ օրենքներով: Խոսք կարող է լինել միայն դրանք փոխադարձաբար իրար հարցատացնելու մասին: Մալխասյանցը, բացի այդ, միանգամայն իրավացի զարմանք է հայտնում այն գործիչների վերաբերյալ, ովքեր կարծում են, թե նույնիսկ առանձին մասնիկներ, վերջավորություններ փոփոխելով, նույնացնելով կարելի է նույնացնել կամ մերձեցնել երկու լեզուներ: Ինչպես արևմտահայերենը, այնպես էլ արևելահայերենը ունեն իրենց ներքին ոգին, կառուցվածքային ուրույն բնույթ: Այնպես որ մասնակի փոփոխությունը չի կարող նրանց ոգին փոխել: Մալխասյանցը ավելի զարմանալի է համարում այն, որ այդ գործիչները վերցնում են միայն ձևաբանական առանձին երևույթներ, բոլորովին անտեսելով շարահյուսական սիստեմը:

Այս առիթով գրած «Մի քանի խոսք մեր երկու գրական լեզուների մերձեցման մասին» հոդվածում բերված են բազմաթիվ փաստեր՝ ցուցադրելու համար արևմտահայերենի և արևելահայերենի մի քանի առանձնահատկություններ, որոնք լիտում են նրանց կառուցվածքային ներքին բնույթից, և որոնք հնարավոր չէ միմյանցում փոխարինել:

Իր ելույթներից մեկում մեծ գիտնականը ընդգծել է, որ ժողովրդի կյանքը, ժողովրդի կեցության տարբեր երևույթներ իրենց արտացոլումն են գտնում վեղվի բառապաշարում, տվյալ ժողովրդի պատմությունը կարելի է լուսաբանել այդ ժողովրդի լեզվի բառապաշարի պատմական քննությամբ: Այդպիսի քննությունը լույս է սփռում ոչ միայն հասարակության ներքին կյանքի երևույթների ուսումնասիրության վրա, այլև հարևան ժողովուրդների հետ նրա ունեցած փոխհարաբերության կարևորագույն մոմենտների վերհանման վրա: Եվ քանի որ բառերը որոշ գաղափար են տալիս տվյալ ժողովրդի քաղաքակրթության ընթացքի մասին, ապա հայ ժողովրդի պատմության համար թերևս հարկավոր կլինեիր 27 հատորա-

նոց բառարան՝ յուրաքանչյուր հատորը մեկ գարի կյանքի լուսաբանությամբ:

Հայոց լեզվի բառամթերքի վրա կատարած երկարատև ու լինդմնավոր աշխատանքը այլ կերպ չի կարելի բացատրել, քան երախտավոր գիտնականի ունեցած մեծ սիրով հայ ժողովրդի և հայոց լեզվի նկատմամբ: Ոչ միայն տեսական որոնումներում, այլև իր մանկավարժական պրակտիկ գործունեության ժամանակ Մալխասյանցը առաջնորդվել է այն նշանաբանով, որ հատկապես հայերենի բառամթերքի մշակմամբ ու հայերենի քերականության գիտական քննությամբ կարելի է նպաստել ազգային մշակույթի առաջընթացի գործին:

Մալխասյանցը զբաղվել է ինչպես հին հայերենի, այնպես էլ աշխարհաբարի քննության հարցերով: Նա կազմել է գրաբարի քերականություն աշխարհաբար լեզվով, տեքստաբանական բաղմամբիվ դիտողություններով վեր է հանել գրաբարի զարգացման տարրեր էտապներին բնորոշ շատ օրինաչափություններ: Ընդ իսկ է, աշխարհաբարի վերաբերյալ նա հանդես չի եկել առանձին մենագրություններով, չի կազմել աշխարհաբարի քերականության ձեռնարկներ, բայց իր մանկավարժական, խմբագրական պրակտիկայում առանձին հոդվածներով ու գրախոսություններով անդրադարձել է աշխարհաբարի հարցերին, քերականությանը, բառապաշարին, ուղղագրությանը: Նա իր հանրահայտ բառարանում փայլուն ձևով արտացոլել է աշխարհաբարի քերականական կառուցվածքի մի շարք օրինաչափությունների բնույթը և զարգացման իրական տենդենսները:

1891 թ. լույս է տեսնում Մալխասյանցի «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները» ձեռնարկը, որը վերահրատարակվում է 1910 թ., իսկ 1892 թ. նա հանդես է դալիս իր «Գրաբարի համաձայնությունը» գրքով, որ առաջինի օրգանական շարունակություն է կազմում: Եթե առաջին գիրքը հիմնականում լուսաբանում է գրաբարի ձևաբանության հարցերը, ապա երկրորդ գիրքը արդեն նվիրված է գրաբարի շարահյուսության հարցերին:

Լինելով հմուտ գրաբարագետ՝ Մալխասյանցը իր այդ գրքերում հին հայերենի օրինաչափությունները քննում է գիտական մեծ բարեսխդհությամբ ու մեթոդական անհրաժեշտ եղանակներով: Այդ քերականությունները աչքի են ընկնում ոչ միայն փաստական նյութի հարստությամբ, խնամքով ընտրված օրինակներով, այլև տեսական ճիշտ մեկնություններով: Հեղինակի քերականագիտական նրբանրկատությունը մեծապես նպաստել է գրաբարի քերականական կա-

ռուցվածքի օրինաչափությունները մշակված կանոնների մեջ համապատասխան բացատրություններով ներկայացնելուն: Հատկապես «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները» գիրքը լեզվաբանական-հայագիտական արժեքավոր ուսումնասիրություն է, ուշագրավ մի քննություն, որը գիտա-մեթոդական առումով գրաբարի մինչև այժմ եղած լավագույն ձևաբանություններից մեկն է, իսկ «Գրաբարի համաձայնությունը» հին հայերենի՝ աշխարհարար լեզվով, միակ ամբողջական, սիստեմատիկորեն մշակված շարահյուսությունը:

«Համաձայնության» ներածականը որոշակի պատկերացում է տալիս քերականագետ Մալխասյանցի դիրքորոշման մասին, որ արտահայտվեց հայերենը հնդեվրոպական լեզու համարողների նրա ջերմ պաշտպանության մեջ, նա սրտանց ողջունեց այն հայագետներին (նաև օտարազգի), ովքեր շանասիրաբար ուսումնասիրում էին հայերենի տեղն ու դիրքը հնդեվրոպական լեզվաընտանիքում: Առանձին առիթներով նա հատկապես մեծ գովեստով ու ոգևորությամբ է խոսում գերմանացի հայագետ Հյուբշմանի մասին, ընդհատում, որ այն ժամանակ, երբ տարակարծություններ էին տիրում հայերենի տեղի ու դիրքի շուրջը հնդեվրոպական լեզուների շարքում, Հյուբշմանի հանդես դալը որոշակի շրջադարձով նշանավորեց հայագիտության այդ բնագավառը: Հյուբշմանի գիտական ողջամտությունը այդ հարցում անգնահատելի չափով օգնեց հայագետներին:

«Համաձայնության» ներածության մեջ Մալխասյանցը շարադրում է նաև հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության նվաճումները ինչպես ընդհանրապես, այնպես էլ՝ հայերենի վերաբերյալ: Այն է՝ հայերենը բառամթերքով ու քերականական կառուցվածքով ծագումնաբանական կապի մեջ է զգալի թվով լեզուների հետ, որոնց մեջ մտնում են գերմանական, ռոմանական, իլավոնական լեզուները, պարսկերենը, սանսկրիտը և մի քանի այլ լեզուներ: Հեղինակը բառական մի շարք ցուցադրումներ է կատարում՝ հաստատելու համար ցեղակցական կապը այդ լեզուներում:

Մալխասյանցը ընդունում է նախալեզվի գոյությունը. այդ լեզվով խոսող ժողովուրդը ապրել է ինչ-որ մի տերիտորիայում, ունեցել է իր քաղաքակրթությունը, որի էական տարրերը արտացոլված են «մայր լեզվի» (նախալեզվի) բառապաշարում: Ժողովուրդների զաղթը այդ ցեղերի առանձին հատվածներ նետել է նվիրականի և Ասիայի տարբեր վայրեր, որոնք բռնել են ինքնուրույն զարգացման ուղին:

Մալխասյանցը քաջ տեղյակ էր պատմա-համեմատական լեզ-

վարանության սկզբունքներին, լեզվական երևույթների գնահատման հարցում հմտորեն օգտվում էր հնչյունական համապատասխանությունների այն օրենքներից, որ գործել կամ գործում են հընդ-եվրոպական լեզուներում:

Գրքի ներածականում որոշակի տեսակետ է հայտնված հայ բարբառների գոյության, այդ բարբառների և գրաբարի փոխհարաբերության հարցերի մասին: «Զկա լեզու, որ շունենա իր բարբառները» — ասում է Մալխասյանցը: Հայերենը նախագրային ժամանակներում ևս ունեցել է բարբառներ, որոնց մասին, պատմական հիշատակություններ չլինելու պատճառով, հավաստի տեղեկություններ չունենք: Տնտեսական ու քաղաքական, աշխարհագրական մասնատվածությունը, կտրվածությունը արագացրել են բարբառների գոյացումը, նրանց հեռացումը միմյանցից, նպաստել են այդ բարբառների ինքնուրույն զարգացմանը: Մալխասյանցը հայ հին մատենագրության փաստերով աշխատել է ցույց տալ մինչմատենագրական շրջանի բարբառների մոտավոր սահմանները, գրաված շրջանները: Մեսրոպի և Սահակի գրառած լեզուն կենտրոնական նահանգի լեզուն (բաղբառ) էր, որով ավելի շատերն էին խոսում, և որը համեմատաբար ավելի էր ընդհանրացած: Պետականության գոյությունը մեծապես նպաստել էր Արարատյան այդ բարբառի մշակմանը և հարստացմանը: Այս հանգամանքներն էլ որոշեցին այդ բարբառի ճակատագիրը, նրա հետագա ընթացքը: Գրավոր դարձած այդ լեզուն, որ միաժամանակ և խոսվում էր ժողովրդի բերանում, օգտագործվեց նաև եկեղեցու կողմից: Այն դարձավ հայ փառահեղ մատենագրության լեզուն: Վերջին հանգամանքը մեծ նշանակություն ունեցավ լեզվի մշակման, նրա՝ նոր բառերով, ոճերով և դարձվածքներով հարստանալու գործում: Դրանով իսկ, մեացած բարբառների համեմատությամբ, այն վեր բարձրացավ:

Մալխասյանցը, քննելով հայերենի բառամթերքը և քերականական որոշ ձևեր, նույնպես գալիս է այն եզրակացության, որ հին հայերենը, լինելով հնդեվրոպական լեզուների մեջ առավել զարգացած լեզուներից մեկը, մի շարք քերականական երևույթների հետ միասին, շատ լավ է պահպանել հույովների հնդեվրոպական ձևերը:

Սակայն հայերենը ևս կրել է պատմական փոփոխություններ, շատ կանոնավոր ձևերի տեղ առաջ են եկել անկանոնություններ, հատկապես միջին դարերում՝ բարբառների ազդեցությամբ և այլ հանգամանքների հետևանքով:

Մալխասյանցը հին հայերենի քերականության կանոնները օրինակներով ցուցադրելու լավագույն եղանակը համարում է ընտրե-

լազուրն մատենագիրներին օգտագործելը: Հատկապես նա շատ էր հավանում Եզնիկի լեզուն, որից էլ ինքը մեծ մասամբ բերում է օրինակներ իր ձեռնարկների համար:

Մալխասյանցը լեզվի զարգացման տեղեկությունները և ընդհանրապես լեզվաբանական երևույթները գնահատելու մեծ վարպետ էր՝ նա այն լեզվաբաններից էր, ովքեր ճիշտ ժամանակին կողմնորոշվեցին դեպի պատմա-համեմատական լեզվաբանությունը, ըստ արժանվույն գնահատեցին համեմատական քերականության դերը լեզուների պատմության և ցեղակցության հարցերը լուսարանելիս: Սակայն մեծավաստակ հայագետը կուլ չի գնացել համեմատական քերականության այն ժամանակները իշխող ուղղությունների բոլոր դրույթներին: Նա վերցրել է նրանց ուսցիոնալ կողմը:

Որոշ հայագետներ, ընդունելով երիտքերականների այն ժամանակները տիրապետող ուղղությունը, չէին կարողանում ազատվել այդ դպրոցի նաև արատավոր թեորիական գրույթներից: Մալխասյանցը, օրինակ, ի տարբերություն Աբեղյանի, մերժեց երիտքերականների թեորիական ամենատարածված, բայց և ամենավատ ձևով լուծված, հարցադրումը անհատական լեզուների գոյության մասին: Նա գտնում է, որ լեզուն, իբրև ռազմական ընդհանրացում ամենակարևոր տարրը, ստեղծում է ժողովուրդը, պատկանում է նրան, արտացոլում է նրա կյանքը:

Ինչպես տեսնում ենք, այն նախադրյալները, որոնցով Մալխասյանցը ձեռնարկեց հայերենի քերականության ուսումնասիրությանը, միանգամայն առողջ էին և համապատասխանում էին լեզվի գիտության զարգացման ժամանակակից մակարդակին:

Մալխասյանցի քերականական հայացքների գործնական արտահայտությունը գրաբարի նրա քերականությունն է՝ երկու նշված գրքերով:

Առաջին գիրքը (Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները) ընդգրկում է հին հայերենի ձևաբանության երեք կարևորագույն բաժինները:

Աշխատելով գրաբարի քերականության ձեռնարկի վրա՝ Մալխասյանցը, ըստ իր իսկ վկայության, հետապնդել է գործնական-ուսուցողական նպատակներ, որպեսզի քերականությունը սկանոններն առաջարկեր աշակերտներին ոչ թե իբրև անգիր սովորելու նյութ, այլ բացատրեր և, աշակերտին մատչելի չափով, հետազոտեր այդ կանոնները, զգալ տար, որ լեզուն մի կամայական երևույթ է, այլ գիտություն է, հիմնված, ինչպես ամեն մի գիտություն,

որոշ օրենքների վրա¹։ Մալխասյանցը համոզված էր, որ քերականության ձևերի մեծամասնությունը ստեղծումից մեծապես կշահեն աշակերտները, նրանք կսովորեն քերականական կանոնները՝ գիտակցաբար տիրապետելով դրանք։

Աշխարհաբար լեզվով գրաբարի քերականություն կազմելու պորձեր մինչև Մալխասյանցն էլ եղել են, սակայն Մալխասյանցի քերականությունը բերեց իր հետ ոչ միայն նյութի, այլև այդ նյութի մատուցման եղանակների, շարադրանքի ոճի թարմություն։

Ձեռնարկի մեջ քննվող օրինաչափությունները, կանոնները հաստատող օրինակները աչքի են ընկնում իրենց պարզությամբ, մատչելիությամբ, հաճեցված իմաստներով։ Դրանք բերված են հիմնականում ընտրելագույն մատենագիրներից։

«Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները» աշխատությունը փաստական նյութի ստուգությամբ և քերականական կանոնների սեղմությամբ, ճշգրտությամբ ու ամբողջականությամբ գրավել է ինչպես հայ, այնպես էլ օտարազգի հայագետների ուշադրությունը։

Անվանի հայագետ-լեզվաբանը իր «Գրաբարի համաձայնությունը» գրքում գրեթե քերականագիտական նույնպիսի նրբանկատությամբ է մոտեցել գրաբարի շարահյուսական սիստեմին։

Այս ամենը ցույց են տալիս, որ Մալխասյանցը լեզվի կառուցվածքային հարցերի մեծ գիտակ է։

Մալխասյանցի լեզվաբանական հայացքների գնահատման գործում կարևոր դեր կարող է ունենալ այն բանավեճի լուսաբանումը, որ տեղի է ունեցել Մ. Արեղյանի և նրա միջև։

Մանուկ Արեղյանը, լինելով երիտքերականների ուղղության հետևորդը մեզ մոտ՝ Հայաստանում, քերականական երևույթների քննության ժամանակ առավելությունը տալիս էր ձևին։ Քերականական ձևը Արեղյանի համար վճռական գործոն է այն կամ այն կատեգորիայի բնույթը բացահայտելու համար։ Ծիշտ է, նա ընդգծում էր, որ ինքը նկատի ունի որևէ ֆունկցիա արտահայտող ձև, որ ենթադրում է ձևի ու բովանդակության միասնություն, սակայն ձևի բացարձականացումը նրա մոտ տանում էր երբեմն դեպի ինքնատիպ ձևավորում պահանջող ֆունկցիայի անտեսում։ Վերջին հանգամանքը ակնհայտորեն դրսևորվեց այն ժամանակ, երբ Արեղյանը իր կազմած «Աշխարհաբարի քերականություն» գրքում դուրս

¹ «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները», Խիֆլիս 1891, Ենդեկու խոսք։

գցեց հայցական հոլովը, իբրև ինքնուրույն ձև շունեցող հոլով. նույն մոտեցումը նա կիրառեց սեռական, տրական հոլովների նկատմամբ. սեռականը լուծելով տրականի մեջ:

«Նոր դպրոցի» 1908 թ. համարներից մեկում Ստ. Մալխասյանցը հանդես եկավ Արեղյանի այդ նորամուծության դեմ, խիստ առարկելով նրան թե տեսական, թե գործնական-մանկավարժական նկատառումներով:

Արեղյանը, իր տեսակետը հիմնավորելու համար 1909 թ. («Հայցական հոլովը մեր աշխարհարարում») ի պատասխան Մալխասյանցի, նորից անդրադարձավ այդ հարցին: Այդտեղ նա ինչպես հայերենի, այնպես էլ այլ լեզուների քերականությունների նյութի հիման վրա կատարում է բազմաթիվ փաստարկումներ՝ հաստատելու համար, որ հայցական հոլովը աշխարհաբարի քերականությունից դուրս գցելը և սեռականի ու տրականի միացումը կատարվել են ոչ թե կամայականորեն, այլ աշխարհաբարի հոլովական սիստեմի իրական գրությունը հաշվի առնելով:

Մալխասյանցի առարկումները հանգում էին նրան, որ հայցականի վերացումը մեր աշխարհաբարի քերականություններից, չի արդարացվում որովհետև ա) հայցական հոլովը հակադիր, հակառական Ֆունկցիա ունի ուղղականի նկատմամբ, և այս երկու հոլովները կազմում են գործողության երկու հակառակ ծայրերը. բ) հայցականը՝ թեպետ աշխարհաբարում շունի սեփական ձև, բայց ունի հատուկ կիրառության ձև, որով զանազանվում է թե ուղղակա-նից թե տրականից¹:

Մալխասյանցի և Արեղյանի բանավեճը սոսկ չի բացատրվում նրանով, որ նրանք տարբեր տեսակետ ունեն հոլովների բնույթի գնահատման հարցում: Քերականագիտական ուսմունքի արդեն իսկ մշակած դրույթները հոլովների վերաբերյալ քաջ հայտնի էին երկուսին էլ:

Արեղյանի քերականագիտական մեծությունը անվիճարկելի է: Արեղյանը մի գլխով բարձրացրեց հայ քերականագիտական միտքը, խոշոր ներդրում կատարեց հատկապես աշխարհաբարի քերականության տեսության հարցերում: Մալխասյանցի հետ վերոհիշյալ խնդրի շուրջը բանավեճելիս նա լիովին համոզված էր իր հարցադրման ճշտության մեջ և կարծում էր թե Մալխասյանցը լիակատար մոլորության մեջ է: Նա Մալխասյանցին մեղադրում էր նաև այն

¹ Այս մասին տես նրա «Հայցական հոլովն աշխարհաբարի մեջ» հոդվածը, («Նոր դպրոց», 1908, № 4):

բանում, որ վերջինս՝ լինելով երկար տարիների մանկավարժ, սովորույթի, տրագիցիայի ուժը իբր չի կարողանում հաղթահարել ե այդ պատճառով չի ուզում ճանաչել հայցական հոլովի իրական վիճակը:

Մինչդեռ Արեղյանը ինքը ևս բազմակողմանիորեն չէր հաշվի առնում հայցականի գործուն օրինաչափությունները:

Բոլորին հայտնի է, որ յուրաքանչյուր հոլով ունի իր որոշակի ձևը և իր հիմնական ֆունկցիան: Հոլովը կարող է ունենալ տարբեր ֆունկցիաներ, բայց նա պետք է ունենա նաև իր բնորոշ ձևը: Ֆունկցիայի շատ լինելը, առատությունը չի վնասում հոլովի որակին, բայց բնորոշ ձև չունենալը կարող է տառնել դեպի որակի կորուստ: Քերականությունը իրենից դուրս է գցում այն հոլովը, որը լեզվի իրական կյանքում իբրև կատեգորիա դադարել է գոյություն ունենալուց, և որը իր ֆունկցիաները հանձնել է այլ հոլովաձևերի կամ բառակապակցությունների:

Այնուհետև՝ հոլովական ձևերը և ֆունկցիաները միշտ չէ որ ծածկում են իրար: Այդ կարող է այդպես լինել ինչպես միևնույն լեզվի պատմության տարբեր փուլերում, այնպես էլ այլ, ցեղակից և ոչ ցեղակից լեզուներում: Գրաբարն ունի վեց հոլով, աշխարհաբարը՝ յոթ: Հոլովները իրենց քանակով և ֆունկցիաների բնութով իրար չեն ծածկում նաև ռուսերենում, լատիներենում, գերմաներենում, թուրքերենում: Բազմազան է և հոլովների ձևական, կառուցվածքային կողմը. հոլովը սոսկ թեքված բառաձև չէ. այն կարող է լինել հարադրված, բառակապակցությամբ արտահայտված ձև: Այսպես՝ հոգերը կամ նախդիրները որոշ լեզուներում անունների թեքված կամ չթեքված ձևերի հետ կարող են կազմել առանձին հոլով: Օրինակ, գերմաներենում հոլովների տարբերակումը հիմնականում իրենց վրա են վերցրել հոգերը:

Բոլոր այս դեպքերում էլ հոլովները ունեն ինքնուրույն ձև:

Որ հոլովները պետք է ունենան ձև, անկախ նրանից, նրանք առանձին թեքված բառաձև են, թե բառահարադրությամբ արտահայտված ձև, առարկության և վիճարկման պատճառ չի եղել Արեղյանի ու Մալխասյանցի համար: Նրանք վիճարկում էին աշխարհաբարի հայցականի ինքնուրույն հոլովաձև ունենալու, ավելի ճիշտ՝ հայցականի ձևի ինքնուրույնության հարցը: Սա բանավեճի առանցքըն էր:

Բայց կար և հարցի մյուս կողմը: Արեղյանը կարծում էր, թե հայցականը, չունենալով ինքնուրույն հոլովաձև, չունի նաև կանոնավորություն ուղղական և տրական հոլովները օգտագործելու մեջ:

հայցականը միշտ չէ, որ միանման դեպքերում նման է ուղղականին, իսկ այլ դեպքերում՝ տրականին: Սրանից նա հետևություն է անում՝ եթե անձի որոշյալ անունները միշտ նման լինեն տրականին, իսկ անորոշները՝ ուղղականին, ապա թերևս ընդունելի լիներ հայցականի անկախ գոյությունը:

Մալխասյանցը կարողացավ ըմբռնել աշխարհաբարի հայցականի սպեցիֆիկան. դրանով իսկ նա ճիշտ կողմնորոշում տվեց հետագա շրջանի քերականագետներին (լեզվաբաններին), հատկապես պրոֆ. Ա. Ղարիբյանին և պրոֆ. Գ. Սևակին՝ տեսականորեն հիմնավորելու հայցական հոլովի առանձին կատեգորիա, ինքնուրույն որակ լինելը և գործնականում ապահովելու նրա գոյությունը քերականության գասագրքերում:

Ուրեմն ո՞րն է Մալխասյանցի ժառայությունը այստեղ:

Մալխասյանցի ժառայությունը այստեղ ամենից առաջ այն է, (այդ հաստատվեց հետագա ուսումնասիրություններում), որ նա այնտեղ, ուր Արեղյանը տեսնում էր անկանոնություն, խառնաշփոթություն, որակի կորուստ, Մալխասյանցը գտավ կանոնավորության մոմենտներ, օրինաչափությունների որոշակի արտահայտություն:

Արեղյանի «Հայցական հոլովը մեր աշխարհարարում» աշխատությունը հայ բանավիճային գրականության փայլուն էջերից մեկն է: Չնայած Արեղյանը քերականագիտական հսկա էր, բայց նրան լիճակվեց հայցականի պրոբլեմի լուծման բախտը: Այդ պրոբլեմը, որ խճճված մի հանգույց էր, լուծվեց Մալխասյանցի կողմից: Արեղյանը այդ հանգույցի շուրջը տիտանական ընդվզումներ արեց, բայց չգտավ թելի ծայրը. այն հաջողվեց գտնել Մալխասյանցին՝ մի թեթև և ճկուն շարժումով: Այդ ճակատագրական շարժումը մենք համարում ենք հայցական հոլովի ձևավորման մեջ, ձևեր ընդունելու մեջ սիստեմի, կանոնավորության արտահայտություններ տեսնելը, որով և գիտականորեն արդարացվեց հայցական հոլովի ինքնուրույն որակ ճանաչելը և հետագա սերունդը ընդռանց այն:

Մեր հայցականի արդի վիճակը և նրա քննությունը հաստատում են Մալխասյանցի կանխազգացումն այն մասին, որ հետագա ուշադիր հետազոտությունը կբացահայտի այն սիստեմի տարրերը, այն կանոնավորությունը, օրինաչափականը, որ կան այդ հոլովի ձևավորման մեջ: Եվ, իսկապես, ժամանակակից մեր հայցականում տեսնում ենք անձի որոշյալ անունների օրինաչափականորեն տրականաձև լինելը, իրի անունների կանոնավորապես ուղղականաձև լինելը, անձի անորոշ և կենդանու անունների որոշակի տատանումները ուղղականի և տրականի ձևերի միջև, որոնք տակայն դեպի կա-

նոնավորութիւնը, դեպի օրինաշարականը գնացող տատանումներ
են: Հայցականի ինքնատիպ ձևավորման մեջ կան և սրանց ենթակա
մասնակի օրինաշարութիւններ:

Ինչպես տեսնում ենք, սա հայցականի ձևերի պարզ անցում չէ.
ուղղականի և տրականի ձևերին: Այստեղ փաստորեն տեղի ունի այլ
պրոցես, Սա իրականում հայցականի ձևավորման մի տեսակից, մի
եղանակից անցում է նրա ձևավորման այլ տեսակին, այլ եղանակին:

* * *

Իր քերականագիտական լեզվաբանական որոնումներում Մալ-
խասյանցը անկասկած հանդիպել է դժվարութիւնների, ունեցել է
չեղումներ: Այդ բոլորով հանդերձ՝ մեծ և անգնահատելի է ակադե-
միկոս Մալխասյանցի վաստակը հայ ժողովրդի համար, հայ կուլ-
տուրայի, հայ լեզվաբանութեան համար:

Մալխասյանցի բեղմնավոր գործունեութիւնը ընդգրկել է հա-
յագիտութեան տարբեր բնագավառներ, իսկ նրա աշխատութիւնների
ցանկում նշվում են 200-ից ավելի գործեր:

Հայ ժողովուրդը, գիտական հասարակայնութիւնը և Սովետա-
կան կառավարութիւնը բարձր գնահատեցին Ստեփանոս Մալխաս-
յանցի ծառայութիւնները. նա արժանացվեց Հայկ. ՍՍՌ Գիտու-
թիւնների ակադեմիայի իսկական անդամի բարձր կոչմանը:

Մալխասյանցը մահացավ 1947 թ., 90 տարեկան հասակում:

Հայ բանասիրութեան պատմութեան մեջ նա միշտ կհիշվի իր բն
հայագիտութեան անխոնջ ու շանասեր մշակ, իրրե ջերմ հայրենա-
սեր, որ իր ժողովրդի հոգևոր մշակույթի և լեզվի համար արել է այն
առավելագույնը, ինչ թույլ է տալիս անել մի գիտնականի կյանքը:

Г. З. ПЕТРОСЯН

ЛИНГВИСТИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ Ст. МАЛХАСЯНЦА

Р е з ю м е

Научная деятельность Ст. Малхасянца охватывает мно-
гие отрасли арменоведения.

Сначала (с 70-х годов прошлого столетия) молодой ар-
меновед занимался в основном филологическими исследо-
ваниями. Он хорошо изучил древнеармянскую и среднеар-
мянскую литературу, в этой области он дал много ценных
трудов.

Особое место занимает Малхасянц в истории армянской грамматики и лексикографии.

В 1891 г. вышла в свет его книга по грамматике: «Склонение, спряжение и предлоги древнеармянского языка», а в 1892 г. — «Синтаксис древнеармянского языка».

В предисловии «Синтаксиса», во многих рецензиях и статьях Малхасянц защищает основные принципы индоевропеистики и особенно подчеркивает научное значение некоторых арменоведческих исследований индоевропейцев — арменоведов.

В своей научной деятельности он сделал много для научной оценки различных практических и теоретических вопросов армянской грамматики. Он смело и правильно вел острую полемику по вопросу склонения (особенно винительного падежа) современного армянского языка. Малхасянц научно доказал существование винительного падежа в современной армянской грамматике.

Армянская общественность глубоко оценила научное наследие великого арменоведа. Лингвистические взгляды Ст. Малхасянца сыграли особую роль в деле развития армянского языкознания.